

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիա

A 12.00.01
U-26

ԿԱՐԵՆ ՀԵԿՏՈՐԻ ՍԱՐԴԱՐՅԱՆ

«Պետության և իրավունքի առաջացման ու դրանց
տիպականացման տեսական հիմնահարցերը»

Ժ.Բ.00.01.- «Պետության և իրավունքի տեսություն և
պատմություն, իրավական ուսմունքների
պատմություն», մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2005

Ատենախոսության քեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտխորհրդում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Ա.Հովսեփյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ.Ստեփանյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ սահմանադրական

իրավունքի կենտրոն
իրավաբանական գիտությունների դոկտոր **Գ.Հ. Սաֆարյան**

Գիտական ղեկավար՝

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2005թ. նոյեմբերի 25-ին ժամը 11:00-ին Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում գործող ԲՈՂ-ի 041 մասնագիտական խորհրդի նիստում (375028, Երևան-28, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմնագիրն առաքվել է 2005 թվականի նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուրսը, իրավաբանական գիտությունների դոկտոր՝ **Գ.Հ. Սաֆարյան**



3877 2005

Աշխատանքի ընդհանուր բնութագիր

Ուսումնասիրության քեմայի արդիականությունը. Պետականության և իրավունքի առաջացման, դրանց տիպականացման հիմնահարցերը իրավագիտության ու իրավունքի տեսության, այսպես կոչված, հավերժական խնդիրներից են: Բոլոր ժամանակներում էլ մարդկային միտքը միշտ ջանացել է բացահայտել պետության և իրավունքի էությունը, դրանց առաջացման պատճառներն ու նախադրյալները, հասարակության քաղաքական կազմակերպման և հասարակական կյանքի կամոնակարգման բնագավառում դրանց դերն ու նշանակությունը: Եվ պատահական չէ, որ այդ հիմնահարցերի վերաբերյալ սկսած հնագույն ժամանակներից մինչև այսօր գոյություն են ունեցել և գոյություն ունեն բազմաթիվ ու բազմատեսակ և նույնիսկ՝ իրարանցիկ հայեցակարգեր, ուսմունքներ, տեսակետներ, դատողություններ, կարծիքներ:

Հիմնահարցի արդիականությունը առավել շեշտադրվում է արդի ժամանակաշրջանում, երբ շատ ժողովուրդներ, այդ թվում նաև հայ ժողովուրդը, վերստին կերտում է նոր պետականության կառուցման և իրավական համակարգի ձևավորման բարդ ու դժվարին գործը: Ցանկացած պետաիրավական երևույթի էության ու բովանդակության լիարժեք ու բազմակողմանի ըմբռնման համար անհրաժեշտ է խորանույն լինել նրա ծագման, զարգացման հիմնախնդիրների և ներկա վիճակի մեջ: Այդ բոլորը հնարավորություն կտան պետական շինարարության ոլորտում խուսափելու անցյալի թերություններից, սխալ դատողություններից և բյուրիմացություններից, ինչպես նաև հաղթահարել ներկայիս դժվարությունները:

Եվ պատահական չէ, որ արդի ժամանակաշրջանում հետազոտողների սևեռում ուշադրությունը գրավող պետության և իրավունքի տեսության բազմաթիվ հիմնահարցերի շարքում գտնվում են նաև պետության և իրավունքի ծագման ու դրանց տիպականացման հիմնահարցերը:

Արդի ժամանակաշրջանում իրավական պետության կատարելագործումը օրյեկտիվորեն ենթադրում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ժողովրդավարության անշեղ ծավալում, այդ թվում նաև պետական շինարարության և իրավական համակարգի ոլորտներում:

Դրա հետ միաժամանակ իրավական պետության ինստիտուտների կայունությունը և անրապնդումը խթանում է ժողովրդավարության զարգացմանը, օժանդակում է քաղաքացիների գիտակցական կարգապահության ամրապնդմանը: Ժողովրդավարական

սկզբունքները կարող են հաջողությամբ իրագործվել կյանքում միայն իրավական օրենքների անշեղ պահպանման, իրավակարգի ամրապնդման և օրինականության ապահովման դեպքում, որն իր հերթին ստեղծում է հուսալի բազա՝ ժողովրդավարության սկզբունքների առավել լիակատար իրագործման համար:

Ժողովրդավարության զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով, իսկ ավելի ճիշտ՝ համալիր հիմնահարցերի լուծումով, որոնց հետազոտությունն այսօր առանձնապես հրատապ է: Մասնավորապես՝ պետության և իրավունքի գիտական տիպականացման հիմնահարցի լուսարանումը անցումային շրջանում:

Վերը նշվածով է պայմանավորված ատենախոսության թեմայի ընտրությունը և նրա հետազոտության արդիականությունը:

Թեմայի ուսումնասիրության վիճակը. Հայրենական իրավագիտությունում խնդրո թեմայի հիմնահարցերը գրեթե անճշակ են, բացառությամբ մի քանի հոդվածների: Խորհրդային իրավագիտությունում պետության և իրավունքի հարցերը, ինչպես հայտնի է, դիտարկվում էին բացառապես մարքսիստական գաղափարախոսության տեսանկյունից, և դրանից շեղումը համարվում էր պարզապես հակագիտական: Սակայն, դրանով համոզեթ, մեր կարծիքով չպետք է ընկնել մեկ այլ ժայռահեղության մեջ, ինչպես դա անում են մույնիսկ նշանավոր իրավաբաններից ոմանք, այն է՝ մատերիալիստական տեսության դրական արդյունքների մերժումը կամ անտեսումը, մասնավորապես՝ պետության և իրավունքի առաջացման պատճառների, դրանց սոցիալ - տնտեսական մախաղդյալների մասին: Գտնում ենք, որ խորհրդային իրավաբանների մի շարք աշխատություններ, որոնք նվիրված են պետության և իրավունքի առաջացման հիմնահարցերի պարզաբանմանը, ամենևին էլ չեն կորցրել իրենց գիտական և ճանաչողական նշանակությունը և որոշակի տեսական բազա են հանդիսանում նաև խնդրո ուսումնասիրության համար: Ինչ վերաբերվում է հետխորհրդային շրջանի խնդրո հիմնահարցին վերաբերող աշխատություններին, ապա դրանց քանակը այնքան էլ մեծ չէ, և հիմնականում ամբողջացված են մի շարք գիտական հոդվածներում և դասագրքերում: Այսինքն՝ պետության և իրավունքի առաջացման և դրանց տիպականացման հիմնահարցերի վերաբերյալ հայրենական իրավագիտությունում բացակայում է ամփոփ և համալիր գիտական հետազոտություն: Այս կապակցությամբ խնդրո ուսումնասիրությունը առաջին փորձերից մեկն է, որը կոչված է մասամբ լրացնելու այդ բացը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները. Հետազոտության հիմնական նպատակն է լուսարանել պետության և իրավունքի առաջացման հիմնական պատմական

ուղենիշները և դրանց տիպականացման հետ կապված հիմնահարցերը:

Նշված նպատակից ելնելով՝ ատենախոսությունում փորձ է արվել լուծել հետևյալ խնդիրները.

- բացահայտել պետության և իրավունքի առաջացման պատճառներն ու մախաղդյալները.
- լուսարանել մախապետականության ժամանակաշրջանի հասարակության կազմակերպման հիմնական ձևերը և գործող սոցիալական նորմերի էությունը.
- վերլուծել պետության և իրավունքի առաջացման մասին հայեցակարգերն ու ուսմունքները.
- պարզաբանել պետության և իրավունքի տիպականացման հիմնական չափանիշները և դրանց դասակարգումը.
- քննական վերլուծության ենթարկել պետության և իրավունքի տիպականացման հիմնական մոտեցումները:

Գիտական նորույթը. Ատենախոսության գիտական նորույթն, ամենից առաջ, արտահայտվում է քննարկվող հիմնահարցերի բազմակողմանի վերլուծության հիման վրա մշակված տեսական հետազոտությունների և եզրակացությունների մեջ: Փաստորեն այն առաջին համալիր և ամբողջական հետազոտությունն է, որտեղ փորձ է արվել բացահայտել պետության և իրավունքի առաջացման հիմնական պատճառներն ու մախաղդյալները, դրանց տիպականացման հետ կապված հիմնահարցերը, ինչպես նաև քննական վերլուծության ենթարկել խնդրո հիմնահարցերի վերաբերյալ հայեցակարգերն ու տեսությունները:

Աշխատանքի գիտական նորույթը որոշակիորեն դրսևորվում է նաև պետության և իրավունքի պատմական զարգացման, մասնավորապես «պարզումակ կամ չարգացած իրավունքի» հասկացության նորովի մեկնաբանման մեջ, ինչպես նաև պետության և իրավունքի տիպականացման չափանիշների որոշարկման խնդրում: Գիտական նորույթի տարրեր են պարունակվում նաև պետության և իրավունքի արժեքավորման, հասարակական կյանքում մինչօրենսդրական իրավունքի և «օրենսդրական իրավունքի» հասկացությունների պարզաբանման ու դրանց խաղացած դերի ու նշանակության պարզաբանումներում:

Պաշտպանության և ներկայացվող հիմնական դրույթները. Ելնելով ատենախոսության նպատակներից ու դրանցից հետևող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

- պետությունը և իրավունքը չափազանց բարդ սոցիալական երևույթներ են, որոնք առաջացել են մարդկային հասարակության երկարատև զարգացման հետևանքով և որոնց առաջացմանը նպաստել են ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև քաղաքական, էթնիկական, հոգեբանական, կրոնական, բարոյական գործոնների մի ամբողջ համակցությունը:
- պետությունը և իրավունքը քաղաքակրթության զարգացման արդյունք են և նրա մեծագույն արժեքներն են, առանց որոնց անհնար է մարդկային հասարակության բնականոն գործունեությունը, նրա առաջընթացը և զարգացումը:
- պետության և իրավունքի առաջացմանը նպաստել են գրեթե նույն պայմաններն ու գործոնները, դրանք կազմում են հասարակության քաղաքական կազմակերպման և հասարակության անդամների վարքագծի կանոնակարգման մեկ ամբողջական քաղաքական - իրավական համակարգ:
- «պարզունակ», «չզարգացած» կամ «մինչօրենսդրական իրավունքը» առաջացել է ավելի վաղ, քան պետականությունը: Մակայն պետության առաջացմանը իրավունքն ապրեց իր «երկրորդ կյանքը», այն դարձավ գրավոր՝ զարգացած, համակարգված և պետական օրենսդրական իրավունք:
- պետությունն առանց իրավունքի /օրենսդրական իրավունքի/ և իրավունքն առանց պետության չեն կարող իրականացնել իրենց գործառնությունները, մեկը պայմանավորված է մյուսով: Լինելով հարաբերակաճող են ինքնուրույն սոցիալ-իրավական և քաղաքական կատեգորիաներ, այնուհամայն էր հասարակությունում դրանց գոյությունը պայմանավորված է անխզելի միասնության և ամբողջության մեջ:
- պետության և իրավունքի հիմնական առաքելությունն է պաշտպանել անձի իրավունքներն ու ազատությունները, ապահովել հասարակության անվտանգությունը, սոցիալական տարբեր խմբերի օրինական շահերը, ինչպես նաև հասարակության կայուն և բնականոն զարգացումը:

Ռստմնասիրության տեսական բազան և մեթոդաբանական հիմունքները. Ատենախոսության համար տեսական բազա են ծառայել պետության և իրավունքի տեսության ու պատմության, ինչպես նաև փիլիսոփայություն, քաղաքագիտություն, պատմություն, հնագիտություն, ազգագրություն, հոգեբանություն առարկաների գծով գիտական մեծագրությունները, դասընթացները և հոդվածները:

Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել խորհրդային և հետխորհրդային շրջանի իրավագիտության ռուսական դպրոցի գիտնականների աշխատությունների ուսումնասիրությանը:

Ատենախոսության հիմքում ընկած են նաև դասականների՝ Արիստոտելի, Պոլիբիոսի, Յիցերոնի, Աբովինացու, Հոբսի, Մաքիավելու, Ժ.Շ. Ռուսոյի, Լոկի, Մոնտեսքիոյի, Կանտի, Հեգելի, Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, ինչպես նաև հայրենական և ռուս գիտնական-իրավաբանների՝ Ա.Մուքիասյանի, Խ.Մանվելյանի, Վ.Ներսեսյանցի, Ն.Ա. Ապիյանի, Մ. Կովալսկու, Ն.Մ. Կոբկունովի, Ֆ.Ֆ. Կոկոչկինի, Պ.Ի. Նովոգորոդցևի, Լ.Ի. Պետրաժիցկու, Գ.Ֆ. Շերշենիչի, Վ.Ե. Չիրկինի, Վ.Ն. Խրոպանյուկի, Ա.Պ. Բուտենկույի, Յու.Ա. Տիխոմիրովի, Ս.Ս. Ալեքսևի և այլոց աշխատությունները:

Հետազոտության համար ենթաիրիկ / փորձառական / բազա է հանդիսացել տարբեր երկրներում պետության և իրավունքի առաջացման ու զարգացման պատմական փորձը, նրանց իրավական համակարգերը:

Լայնորեն օգտագործվել են նաև պատմական, հնագիտական, ազգագրական նյութերը, որոնք այս կամ այն կերպ առնչվել են խնդրո թեմայի հիմնահարցերին:

Հետազոտության ընթացքում կիրառվել են դիալեկտիկական, տրամաբանական, պատմահամեմատական, համակարգային - կառուցվածքային վերլուծության, համեմատական - իրավաբանական և մկարագրական վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գործնական նշանակությունը. Աշխատանքի գործնական նշանակությունն այն է, որ թեկնածուական ատենախոսությունում տեղ գտած տեսական հետազոտությունները և գործնական առաջարկությունները կարող են որոշակիորեն օգտագործվել պետական շինարարության և ազգային իրավական համակարգի ձևավորման ոլորտում:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նաև իրավաբանական ինստիտուտներում և ֆակուլտետներում դասավանդվող «Պետության և իրավունքի տեսություն» առարկայի գծով ընդհանուր և հատուկ դասընթացների համար:

Ռստմնասիրության արդյունքների փորձարկումը. Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրատարակված մի շարք գիտական հոդվածներում:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում անցկացվել է ատենախոսության

քննարկումն ու գրախոսությունը:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը վաղկացած է ներածությունից, երեք գլխից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի ընտրությունը և հետազոտության արդյունավետությունը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորայրը, տեսական և կիրառական նշանակությունը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Պետությունը և իրավունքը որպես քաղաքակրթության զարգացման աղբյուր» վերտառությամբ հանգամանորեն լուսաբանվում են պետության և իրավունքի առաջացման հիմնական ուղեհիշերը, ինչպես նաև պետությունը և իրավունքը դիտարկվում են որպես քաղաքակրթության զարգացման աղբյուր և սոցիալական արժեք:

Պետության և իրավունքի առաջացման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական - ճանաչողական, այլև քաղաքական - գործնական նշանակություն: Այն հնարավորություն է տալիս առավել խորությամբ ճանաչել պետության և իրավունքի սոցիալական էությունը, նրանց բնութագրական առանձնահատկությունները: Հիմնախնդրի հետազոտության շնորհիվ հնարավորություն կառաջանա քաղաքակրթության ուսումնասիրել պետության և իրավունքի էությունը, ինչպես նաև որոշելու դրանց տեղն ու դերը հասարակական կյանքում և քաղաքական համակարգում:

Անցումը մինչիրավական և մինչպետական վիճակից դեպի իրավունք և պետություն կատարվել է նախնադարյան համայնական կարգերի քայքայման պայմաններում, և դրանով նշանավորվել է մարդկանց սոցիալական կյանքի ամբողջ համակարգում կատարված էական փոփոխությունները:

Պետականության և իրավունքի առաջացման գործընթացը տևել է հազարամյակներ, իսկ դրանից շատ ավելի վաղ ժամանակներում ձևավորվել են մարդկային հասարակության սաղմնային կազմավորումները / տոհմերը, ցեղերը, ցեղային միությունները և, այսպես կոչված, նախապետությունները: Հասարակությունը մարդկանց ինքնակամ կամ հարկադրական միավորում չէ, քանզի մարդը հասարակական էակ է և հասարակությունից, սոցիալական կապերից դուրս ժամանակի ընթացքում մարդը կորցնում է կամային և գիտակցական հատկությունները:

Համաշխարհային գիտությունը ավացուցել է, որ հասարակության առաջացումը նախորդել է նրա կյանքի պետականորեն կազմակերպմանը: Մարդկային հասարակության

պատմությունը սկսվում է նախնադարյան համայնական կարգերի կազմավորմամբ, որի ժամանակ արտադրության գործիքները կատարելագործված չէին, իսկ աշխատանքի արտադրողականությունը այնքան ցածր էր, որ մույնիսկ չէր բավարարում նախնադարյան մարդու ապրուստի նվազագույն պահանջները: Այդ պատճառով հասարակության կյանքի հիմքում ընկած էր արտադրության միջոցների հանրային սեփականությունը, իսկ աշխատանքի արդյունքի բաշխումը իրականացվում էր հավասարության սկզբունքով:

Գիտնականների կարծիքով նախնադարյան համայնական հասարակարգը մարդկության պատմության մեջ ամենաերկարատև փուլն էր՝ ավելի քան մեկ միլիոն տարի: Այդ դարաշրջանի ստորին սահմանագիծը քիչ թե շատ ճշտությամբ որոշվել դժվար է, քանի որ մեր հեռավոր նախնիների նոր հայտնաբերվող ոսկրե մնացորդները մասնագետների մեծամասնությունը մեկ վերագրում է նախամարդուն, մեկ՝ մարդուն, և ժամանակ առ ժամանակ գերակշռող կարծիքը փոխվում է:

Նախնադարի պատմության պարբերացման խնդրում գրականության մեջ առանձնացվում են մի շարք պատմական շրջաններ: Դրանք տարբերակվում են որպես մի կողմից նախապատմություն, մյուս կողմից՝ պրոտո - , պարա - , կամ էթնոպատմություն: Այս անվանումների տակ հասկացվում են ոչ միայն գիտության բաժինները, այլև դրանց կողմից ուսումնասիրվող դարաշրջանները:

Ընդ որում, այդ հասարակությունների տարբերակումն ունի նաև պատմափնտառային բովանդակություն:

Նախնադարյան տնտեսության հետագա ուսումնասիրությունը հնարավոր դարձրեց բացահայտել կարևոր տարբերություններ նախնադարյան տոհմական համայնքի զարգացման հիմնական փուլերում գոյություն ունեցող բաշխման և սեփականության հարաբերություններում: Յուրացնող տնտեսություն վարող և գլխավորապես լոկ կենսաապահովման միջոցներ ստացող վաղ նախնադարյան համայնքում գերիշխող էին հավասարաչափ բաշխումը և ընդհանուր սեփականությունը. համայնքի յուրաքանչյուր անդամ արտադրված կենսամթերքի բաժնի իրավունք ուներ անկախ այն բանից՝ մասնակցել էր ինքը դրա արտադրմանը, թե ոչ: Ուշ նախնադարյան համայնքում, որ անցել էր արտադրող կամ բարձր մասնագիտացված յուրացնող տնտեսաձևի և ստանում էր համեմատաբար կայուն ավելցուկային մթերք, հավասարաչափ բաշխման հետ համատեղ զարգանում էր ըստ աշխատանքի բաշխումը, որի դեպքում մթերքի որոշ մասն անցնում էր համայնքի առանձին անդամներին, և ընդհանուր սեփականության կողքին զարգանում էր անձնական սեփականությունը: Գիտնականների տեսական վերլուծությունները հնարավորություն

տվեցին նախնադարյան տոհմական համայնքին նախորդող տնտեսաձևը բնորոշել որպես նախահամայնք /նախնադարյան մարդկային հոտ/, իսկ դրան հաջորդած ձևը՝ որպես նախնադարյան հարևանական /մինչգյուղացիական/ համայնք: Նախնադարյան տնտեսության ուսումնասիրությունը շարունակվում է, բայց և այն, ինչ արդեն արվել է, ցույց տվեց նախնադարի պատմության ընդհանուր պարբերացման ընդունված չափանիշի գործունեությունը և այդ պատմության հիմնական փուլերի ու նախնադարյան համայնքի զարգացման հիմնական տեսակների նույնացման օրինաչափությունը:

Տիպարանական այդ շարքը՝ նախահամայնք /նախնադարյան մարդկային հոտ/, վաղ նախնադարյան և ուշ նախնադարյան հարևանական /մինչգյուղացիական/ համայնքներ, համապատասխանում է հենց նախնադարի պատմության հիմնական փուլերին: Մակայն որոշ փուլերի սահմանագատումը դեռևս մնում է վիճելի:

Նախնադարի պատմության ընդհանուր պարբերացումը մշակվել և մշակվում է նաև արևմտյան շատ ուսումնասիրողների կողմից: Այդպիսի փորձեր, գերազանցապես, արվում են ԱՄՆ -ի գիտնականների կողմից: Առավել տարածված է բաժանումը էգալիտար /հավասարական/ և ստրատիֆիկացված /շերտավորված/, կամ հիերարխիկ /աստիճանակարգված/ հասարակությունների: Էգալիտար հասարակությունները համապատասխանում են նախնադարյան տոհմական համայնքի փուլին, իսկ ստրատիֆիկացվածները՝ դասակարգերի ձևավորման դարաշրջանի հասարակություններին: Էգալիտարի և ստրատիֆիկացվածի միջև հաճախ տեղադրում են նաև ռանժիրացված /տարակարգ/ հասարակությունները: Ընդ որում, այդ սխեմայի կողմնակիցները համարում են, որ ռանժիրացված հասարակություններում գոյություն ունի միայն սոցիալական, իսկ ստրատիֆիկացվածներում՝ նաև գոյրային անհավասարություն: Այդպիսի սխեմաների առավել էական և գրավիչ առանձնահատկությունը նախնադարյան հասարակարգում հավասարական /էգալիտար/ բնույթի, այսինքն՝ նախնադարյան կոլեկտիվիզմի ճանաչումն է: Նախնադարյան տոհմական համայնքի դարաշրջանը սկսվում է սոցիալական կազմակերպության առաջին կարգավորված ձևերի՝ տոհմի և տոհմական համայնքի ծագումով: Հենց այստեղ էլ առավել ցայտուն են դառնում նախնադարյան համայնական հասարակարգի հիմնական գծերը՝ արտադրման և սպառման մեջ քիչ քան շատ հետևողական կոլեկտիվիզմը, ընդհանուր սեփականությունը և հավասարաչափ բաշխումը:

Դասակարգերի ձևավորման դարաշրջանում հավելյալ մթերքի երևան գալով սկսվում է դասակարգային հասարակության ինստիտուտների, այդ թվում, դրանցից

կարևորագույնների՝ մասնավոր սեփականության, դասակարգերի և պետության հասունացումը: Վճռորոշ նշանակություն ունեն մասնավոր սեփականությունը, որը հնարավոր դարձրեց մյուս բոլոր ինստիտուտների գոյությունը:

Դասակարգերի ձևավորման դարաշրջանում արտադրական գործունեության մասնագիտացումը և սոցիալ - պոտենտար կյանքի բարդացումը հանգեցրին նրան, որ կենսագործունեության զանազան ոլորտներն արդեն ունեին իրենց լիդեր - ղեկավարները՝ խաղաղ պայմաններում, ռազմական առաջնորդները, քրմերը, հազվադեպ, նաև դատավորները: Ֆունկցիաների նման բաժանումը պարտադիր չէր /դրանցից երկուսը կամ նույնիսկ երեքը կարող էին կենտրոնացված լինել մի կարգի ղեկավարի ձեռքում/, բայց հանդիպում էր բավական հաճախ: Այնուհանդերձ, նույնիսկ բաժանված իշխանությունը չէր թուլանում, այլ ամրապնդվում էր, որովհետև այն իր բնույթով ավելի հստակորեն էր տարբերվում նախնադարյան իշխանությունից:

Խաղաղ ժամանակների ղեկավարները գիտական գրականության մեջ անվանվում են տոհմացեղային ավագանի կամ տոհմացեղային ազնվականություն: Եվ իրոք, հասարակական արտադրության և հասարակական արդյունքի վերաբաշխման ղեկավարման մենիշխանության հաստատմամբ տոհմացեղային իշխանության կրողները և նրանց իշխանությունն աստիճանաբար կտրվում էին ժողովրդից: Հասարակական արդյունքի տնօրինությունը այդպիսի ղեկավարներին հնարավորություն էր ընձեռնում իրենց շրջապատել ճարտասաններով, բանբերներով, խորհրդականներով, անձնական քիկնապահներով, դահիճներով և այլն: Նրանց իշխանությունն առավել ուժեղ էր այն դեպքում, երբ նրանք միաժամանակ նաև ռազմական և /կամ/ կրոնական առաջնորդներ էին: Առաջին դեպքում նրանց իրավասության մեջ էր հայտնվում ուղղակի ճնշման այնպիսի հզոր մի ապարատ, որպիսին ռազմական ջոկատն էր, իսկ երկրորդ դեպքում՝ գաղափարական և հոգեբանական ներգործության միջոց հանդիսացող կրոնը:

Ռազմական առաջնորդներ կարող էին դառնալ ինչպես տոհմացեղային ավագանու անդամները, այնպես էլ հասարակ ծագում ունեցող, բայց ռազմական փառքի արժանացած տոհմակիցները: Դասակարգերի ձևավորման դարաշրջանում ռազմական գործունեության զարգացմանը զուգընթաց ռազմական առաջնորդները երկրորդ պլան էին մղում կամ ընդհանրապես իշխանությունից զրկում էին մյուս լիդերներին: Հենվելով ռազմաջոկատային ուժին, առաջնորդը հնարավորություն ուներ անտեսել հին ավանդույթները և ցեղակիցներին պարտադրել իր կամքը: Տոհմացեղային ավագանին, եթե այն ընդհանրապես պահպանել էր

ղեկավարման ոլորտի ինչ - որ իրավունքներ, ստիպված էր աստիճանաբար իր տեղը զիջել ռազմական առաջնորդին և նրա մերձավորներին՝ ավագ ջոկատականներին, սակայն շահագրգռված լինելով իշխանության ամրությանը և իր սեփականության հուսալի պաշտպանությանը, ավագամին այնքան էլ վճռականորեն չէր դիմադրում նոր ձգտումներին:

Գասակարգերի ձևավորման դարաշրջանում իշխանության ամրապնդման, անխափան գործունեության ու կայունության ապահովման համար անհրաժեշտ էր դառնում ժառանգական իշխանության ինստիտուտին կարգավիճակ հատկացնելը: Միայն իշխանության ժառանգական լինելը կարող էր ապահովել ղեկավարման փորձի հուսալի փոխանցումը զիր չունեցող հասարակության պայմաններում, միայն դա կարող էր երաշխավորել, որ իշխանության նոր կրողը կօժտվի ի վերուստ տրված բարեբախտությամբ, որն, ինչպես հավատում էին, ոչ միայն անձամբ իր՝ սրբագործված առաջնորդի, այլև նրա մերձավոր հարազատների մենաշնորհն էր: Ժամանակակից գիտական գրականության մեջ դասակարգերի ձևավորման դարաշրջանի ժառանգական ղեկավարի մասին ավելի հաճախ կիրառվում է «առաջնորդ» տերմինը:

Մեծ մասամբ հենց առաջնորդություններում ավարտվում էր պոտենտար կազմակերպության վերածումը քաղաքական կամ պետական կազմակերպության, որը քիչ քե շատ բացահայտ դասակարգային դիկտատուրա էր: Նրա կարևորագույն հատկանիշը հատուկ, ժողովրդից կտրված, առանձնացված հասարակական իշխանության հանդես գալն էր, որն օժտված էր ղեկավարման և հարկադրանքի ապարատով: Առաջնորդը վերածվում էր տիրակալի՝ իշխանի, քազավորի, արքայի:

Քաղաքական կազմակերպության մյուս կարևոր հատկանիշն անցումն էր հավելյալ մթերքի վերաբաշխման կանավոր ձևերից և առաջնորդներին տրվող նվերներից կարգավորված հարկահավաքին: Գրան հնարավորություն էր տալիս բռնի հարկադրանքի և գաղափարական ներգործության ապարատներով օժտված այդ նույն հասարակական իշխանությունը:

Պետական կառուցվածքի մեկ այլ ընդհանուր հատկանիշ էր բնակչության ստորաբաժանումը ոչ քե տոհմացեղային, այլ տարածքային սկզբունքով: Առաջանում էին գավառներ, մարզեր, նահանգներ և այլն, որոնք չէին հանդնկնում նախկին տոհմացեղային միավորների հետ, քեև երբեմն պահպանում էին նախկին անունները:

Պետականության կազմավորման դարավոր ընթացքում աստիճանաբար ձևավորվում էր նաև նրա անբաժան ուղեկիցը՝ օրենսդրական իրավունքը կամ գրավոր

իրավունքը:

Վաղ և ուշ դարաշրջանների նախնադարյան համայնքներում գոյություն ունեին նաև սոցիալական նորմեր, այսինքն՝ վարքի սրբատաղիր, հասարակայնորեն պաշտպանվող կանոններ: Այդ նորմերը աշխատանքի բաժանման համագործակցության, բաշխման, փոխադարձ պաշտպանության, էքսգամիայի և այլնի կանոնները, համապատասխանում էին կոլեկտիվի կենսական կարևոր շահերին և, որպես նորմեր, անշեղորեն պահպանվում էին: Բացի այդ, գործադրվելով սերնդե-սերունդ, դրանք ստանում էին սովորության ուժ, դառնում էին սովորույթներ: Վերջապես, դրանք ամրապնդվում էին գաղափարախոսությամբ՝ կրոնական դոգմաներով և առասպելներով: Այնուհանդերձ, ինչպես միշտ, գտնվում էին նաև համընդհանուր նորմերի իրավախախտներ: Դա պահանջում էր հասարակական ազդեցության ոչ միայն համոզման, այլև հարկադրման միջոցների գործադրումը:

Կիրառվում էին հարկադրման անենատարբեր եղանակներ, սկսած պարսավանքից, ծաղրից կամ հայտնաբերից մինչև ֆիզիկական հաշվեհարդարը: Խոշոր զանցանքները հարուցում էին ավելի լուրջ պատիժներ՝ ծեծ, անդամախեղում, իսկ առավել ծանր հանցանքների ժամանակ, նույնիսկ մահ կամ, որ ըստ էության նույնն է, արտաքսում կոլեկտիվից:

Հայտնի է, որ մինչդասակարգային հասարակությունում աստիճանաբար ձևավորվեցին սովորույթները և բարոյական նորմերը, որոնք կարգավորում են համայնական հարաբերությունները:

Նախնադարյան սոցիալական կարգավորիչները կատարում էին երկու գործառույթ:

Սոցիալական նորմերի առաջին գործառույթը այն էր, որ նրանք թույլ էին տալիս նախնադարյան մարդկանց իրենց հոգեկան էներգիան ազատել շրջակա աշխարհի հանդեպ վախից, տազնապից և ուղղել այն արտադրական գործունեությանը:

Սոցիալական կարգավորման երկրորդ գործառույթը հասարակության մեջ կայուն հարաբերությունների հաստատումն է, քանի որ հենց այդպիսի հարաբերություններն են բացառում պատահական, զուտ սուրյեկտիվ հանգամանքներն ու շարժառիթները, որոնք կարող էին արտահայտվել ազգակիցներից կամ ցեղակիցներից յուրաքանչյուրի կողմից:

Այսպիսով, սոցիալական նորմերի պահանջարկը առաջացել է մարդկային հասարակության զարգացման ամենավաղ փուլերում և կապված է մարդկանց վարքը կարգավորելու անհրաժեշտության հետ, ինչը հնարավոր է դարձնում նրանց նպատակահարմար փոխգործակցությունը այնպիսի խնդիրների լուծման համար, որոնք մեկ

առանձին մարդու ուժերից վեր է:

Լինելով հարաբերականորեն ինքնուրույն կատեգորիաներ, պետությունը և իրավունքը առանձին - առանձին չեն կարող գոյություն ունենալ: Այդ կատեգորիաները օրգանապես կապված ու փոխապայմանավորված են, և նրանց սոցիալական արժեքը պայմանավորված է հենց դրանց անխզելի միասնությամբ:

Պետությունը և իրավունքը լինելով քաղաքակրթության արդյունք, միևնույն ժամանակ իրենցից ներկայացնում են սոցիալական սեփական արժեքներ, որոնք արտահայտվում են պետության և իրավունքի առաքելության ու դրանց գործառույթների մեջ:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Պետության և իրավունքի առաջացման մասին տեսությունների ու հայեցակարգերի բնական վերլուծություն» վերնագրով, համակողմանի վերլուծության են ենթարկվում պետության և իրավունքի մասին հիմնական հայեցակարգերը, ուղղությունները, դպրոցները, բացահայտվում է յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Համաշխարհային գիտությունում պետության և իրավունքի առաջացման վերաբերյալ միշտ գոյություն է ունեցել բազմաթիվ և բազմազան տեսություններ, հայացքներ, կարծիքներ: Եվ այդ հանգամանքը միանգամայն բնական է և հասկանալի, քանզի դրանցից յուրաքանչյուրը արտահայտում է տարբեր սոցիալական և քաղաքական խմբերի հայացքներն ու դատողությունները խնդրո հիմնահարցի վերաբերյալ: Այդ գաղափարները պայմանավորված են տարբեր տնտեսական, քաղաքական, ազգային, կրոնական, մշակութային և այլ գործոններով, որոնք ուղղակի կամ անուղղակի, այս կամ այն չափով ազդեցություն են ունենում պետության և իրավունքի ծագման պատճառների վերաբերյալ հայացքների խնդրում:

Աստվածաբանական տեսություն: Այն պետության ծագման մասին ամենաինքն տեսություններից է: Նրա ներկայացուցիչներն են Հին Արևելյի, միջնադարյան Եվրոպայի /Մ.Ավգուստին, Թ.Արվինացի/, Իսլամի և ժամանակակից կարողիկ եկեղեցու /Ժակ Մարիտե/ կրոնական գործիչները: Այդ տեսության համաձայն, ինչպես բոլոր երևույթներն ու առարկաները, այնպես էլ մասնավոր սեփականությունը, սոցիալական խմբերը, կայսրությունները, պետությունը և այլն ստեղծել է Աստված: Այդ տեսությունը պաշտպանում է նաև պետության կախվածությունն աստվածային կամքից, որը դրսևորվում է եկեղեցու և կրոնական այլ կազմակերպությունների միջոցով: Խնդրո տեսության հիմքում ընկած են մարդկանց համատեղ կյանքի պատշաճ կազմակերպման, ներառյալ վարքագծի համապատասխան պարտադիր կանոնների և ընդհանուր իշխանության վերնարդկային, գերբնական /երկնային, աստվածային/ սկզբնաղբյուրի ու ծագման մասին պատկերացումները:

Նահապետական տեսություն: Այդ տեսությունը նույնպես ծագել է հին

ժամանակներում: Համաձայն նահապետական և հայրապետական ուսմունքի, պետականությունը առաջացել է ընտանիքից, իսկ հանրային - քաղաքական իշխանությունը՝ ընտանիքի հոր իշխանության շարունակությունն է:

Այսպես, Կոնֆուցիոսը / մ.թ.ա. 6 - 5 -րդ դարեր / հին չինական ավանդույթների ոգով Կայսերին համարելով «Երկնի որդի» և Երկնի կամքը կատարող, միևնույն ժամանակ Կայսեր իշխանությունը նույնացնում էր ընտանիքի գլխի իշխանությանը, իսկ պետությունը՝ մեծ ընտանիքին: Այսպիսով, այստեղ «Երկնի որդին» համարվում է երկրի հայրը: Միապետի իշխանությունը /«Երկնի որդի»/ ըստ Կոնֆուցիոսի, ընտանիքի հայրիշխանության շարունակությունն է:

Նահապետական տեսության կարկառուն ներկայացուցիչներից է նաև հույն հանճարեղ փիլիսոփա Արիստոտելը: Ըստ նրա՝ պետությունը նահապետական ընտանիքների բնական զարգացման արգասիք է, քանի որ այն արտահայտում է մարդու բնույթը, էությունը, շահերը: Իսկ մարդն անխզելիորեն կապված է պետության հետ: Բայց այդպիսի գաղափարներ արտահայտել են նաև ոչ հեռավոր անցյալի մտածողներ Ռ.Ֆիլմերը, Ն.Միխայլովսկին և ուրիշներ:

Նահապետական տեսության իմաստն այն է, որ պետությունը ծագել է տոհմերը ցեղերից, ցեղերը մեծ ընդհանրությունների մեխանիկական միավորումներից: Տոհմապետը, ցեղապետը դառնում է պետության գլուխ՝ միապետ: Նրա իշխանությունը դառնում է տոհմապետի կամ ցեղապետի իշխանության շարունակությունը: Այդ տեսության համաձայն, բոլոր մարդիկ ենթարկվում են իշխանությանը: Հետևաբար, պետությունը նահապետական իշխանության զարգացման ձևն է, որը հանդես է գալիս բոլորի ամունից և ընդհանուրի օգտին:

Հասարակական պայմանագրի տեսությունը: Պետության առաջացման պայմանագրային հայեցակետերը հայտնի էին դեռևս հնագույն ժամանակներում: Պետության պայմանագրային ծագման տարբեր բնական - իրավական պատկերացումների կարելի է հանդիպել դեռևս հին աշխարհում /Մո - 9գի, Էպիկուր և ուրիշներ/: Այսպես, պետության առաջացման պայմանագրային հայեցակարգը մշակել է հին չինական մտածող Մո - 9գին /5 - րդ դ. մ.թ.ա./: Հնագույն ժամանակներում, ըստ նրա, մարդկանց միջև բազմակողմանի էր բռնամտությունը, բացակայում էր կառավարումը և պատիժը. «յուրաքանչյուրն ուներ իր պատկերացումները արդարության մասին»: Հույն մտածող Էպիկուրը պետության առաջացումը բացատրում էր որպես մարդկանց միջև կնքված պայմանագրի արդյունք, որի առաքելությունն էր բարօրության և անվտանգության ապահովումը:

Բնական իրավունքի կողմնակիցները գտնում են, որ պետությունը իրավաբանական ակտի՝ հասարակական դաշինքի արդյունք է, որը ժողովրդի բնական կամքի ծնունդն է: Այդ

պատճառով բննարկվող տեսությունը կապված է պետության ծագման մեխանիկական պատկերացումների հետ, որն հանդես է գալիս որպես մարդկանց գիտակցական կամքի արհեստական ստեղծագործություն, որոնք համաձայնվել են միավորվել հանուն ազատության և կարգուկանոնի լավագույն ապահովման:

Պետության և իրավունքի պայմանագրային ծագման գաղափարը լայն տարածում գտավ նոր ժամանակներում:

Այդ գաղափարը զարգացրել են վաղ բուրժուական քաղաքական - իրավական մտքի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Հ.Գրոցիոսը, Թ.Հոբսը, Բ.Սպինոզան, Ջ.Լոկը, Ժ.Շ.Ռուսոն, Ի.Կանտը, Ա.Ն.Ռասկոլնիկը և այլոք:

Պայմանագրային /հասարակական դաշինքի/ տեսության դասական հիմնավորումն իր արտահայտությունն է գտել Ժ.Շ.Ռուսոյի աշխատություններում: Ելնելով պատմական փորձից, նա հանգեց այն եզրակացության, որ կտավարողները սկսեցին պետությունը դիտել որպես իրենց սեփականություն, իսկ քաղաքացիներին՝ որպես իրենց ստրուկներ: Նրանք դարձան բռնակալներ, ժողովրդին շահագործողներ:

Օրգանական տեսություն: Պետության որպես մարդկային օրգանիզմի յուրօրինակ մեմբրանային մասին պատկերացումները ձևավորվել են դեռևս հին հունական մեմբրանների կողմից: Պլատոնը, օրինակ, պետության կառուցվածքը և ֆունկցիաները համեմատում էր մարդկային հոգու ընդունակությունների և կողմերի հետ: Արիստոտելը գտնում էր, որ պետությունը շատ կողմերով մարդկային կենդանի օրգանիզմ է հիշեցնում և դրա հիման վրա ժխտում էր մարդու, որպես մեկուսացված էակի գոյության հնարավորությունը: Իր հայացքները պատկերավոր կերպով նա հիմնավորում էր հետևյալ համեմատությամբ՝ ինչպես մարդկային մարմնից անջատված ձեռքերն ու ոտքերը չեն կարող ինքնուրույն գործել, այնպես էլ մարդը չի կարող գոյություն ունենալ առանց պետության:

Բռնության տեսություն: Այս տեսության գաղափարական սկզբնաղբյուրներն առաջացել են դեռևս ստրկատիրության դարաշրջանում: Նրա ներկայացուցիչները գտնում էին, որ պետությունն առաջանում է բռնության և նվաճումների հետևանքով: Բռնության տեսությունն առավել ծավալուն գիտական հիմնավորում ստացավ 19 - 20 -րդ դարերում: Դրա իմաստը նրանում է, որ մասնավոր սեփականության, դասակարգերի և պետության առաջացումը ներքին և արտաքին բռնության հետևանք է, այսինքն՝ անմիջական քաղաքական գործողության հետևանք: Պետությունը շարունակում է ճնշման մարմին լինել միայն այն երկրներում, ուր դեռևս չեն վերացել իրավաբանական տարբերությունները

պարտվողների և հարբողների միջև: Այս ուղղությամբ կողմնակիցները պետության ծագումը մեկնաբանում են որպես բռնության /ներքին կամ արտաքին/ արդյունք:

Հոգեբանական տեսություն: Մրա կողմնակիցները հասարակությունն ու պետությունը բնորոշում են որպես մարդկանց և նրա տարբեր միավորումների հոգեբանական փոխազդեցությունների ամբողջություն: Այս տեսության էությունը կայանում է կազմակերպված խմբակցության շրջանակներում մարդկանց ապրելու հոգեբանական պահանջմունքների, ինչպես նաև կոլեկտիվ փոխազդեցության զգացմունքի անհրաժեշտության մեջ: Խոսելով որոշակի կազմակերպության նկատմամբ հասարակության բնական պահանջմունքների մասին, հոգեբանական տեսության ներկայացուցիչները գտնում են, որ հասարակությունը և պետությունը մարդու զարգացման հոգեբանական օրինաչափությունների հետևանք են:

Իրականում պետության առաջացումն ու գործունեությունը բացատրել միայն հոգեբանական տեսանկյունից հազիվ թե հնարավոր է: Հասկանալի է, որ հասարակական բոլոր երևույթները լուծվում են մարդկանց հոգեբանական ակտի հիման վրա և դրանից դուրս ոչինչ հասարակական չկա: Այս իմաստով, հոգեբանական տեսությունը բացատրում է հասարակական կյանքի շատ հարցեր, որոնք վրիպել են տնտեսական, պայմանագրային, օրգանական տեսությունների ուշադրությունից: Մակայն հասարակական ողջ կյանքը մարդկանց հոգեբանական փոխազդեցությանը հանգեցնելու, հասարակության և պետության կյանքը հոգեբանության օրենքներով բացատրելու փորձը նույնպիսի չափազանցում է, ինչպես և մյուս բոլոր պատկերացումները հասարակության և պետության մասին:

Մատերիալիստական /դասակարգային/ տեսություն: Պետության և իրավունքի ծագման մարքսիստական հայեցակարգը հիմնվում է հասարակության ու հասարակական զարգացման մասին պատմության մատերիալիստական ըմբռնման, պետության և իրավունքի դասակարգային մեկնաբանման վրա:

Համաձայն մարքսիզմի՝ պետությունը ծագում է նախնադարյան համայնական կարգերի զարգացման բնական պատմական գործընթացի հետևանքով /արտադրողական ուժերի աստիճանական զարգացում, աշխատանքի բաժանում, մասնավոր սեփականության ծագում, հասարակության գույքային և սոցիալական տարբերակում, դրա տրոհումը շահագործողների ու շահագործվողների և այլն/, որպես տնտեսապես գերիշխող, շահագործող դասակարգի հարկադիր իշխանության գործիք՝ ունեզուրկ, շահագործվող դասակարգի նկատմամբ:

Այս մարքսիստական հայեցակարգի դրույթները շարադրված են Կ.Մարքսի, Ֆ.Էնգելսի, Վ.Ի.Լենինի և մյուս մարքսիստների աշխատություններում:

20 -րդ դարի 90 -ական թվականներից սկսած, ռուսական իրավագիտության մեջ ակադեմիկոս Վ.Ս.Ներսիսյանցի կողմից մշակվեց և զարգացավ պետության առաջացման չափազանց հետաքրքիր և ուրույն հայեցակարգ՝ ազատական - իրավաբանական:

Իրավունքի և պետության ծագման ազատական - իրավաբանական հայեցակարգը չի ժխտում այդ հիմնահարցի նկատմամբ այլ մոտեցումներում եղած մի շարք դրույթների ճանաչողական նշանակությունը: Տվյալ հայեցակարգը ելնում է իրավունքի և պետության ծագման համար անհրաժեշտ նվազագույն պայմանից: Իրավունքի և պետության, որպես ազատության ձևի, ծագման նման բացարձակ անհրաժեշտ պայման /և կարելի է ասել, եզրափակիչ պատճառ/ է բուն ազատության առկայությունը /ազատ անհատների սոցիալապես նշանակալից խմբի առկայությունն անազատների, ստրուկների նկատմամբ դրա սկզբունքային հակադրության մեջ/: Այստեղ էական է հենց այն, որ ազատությունն առանց իրավունքի և պետության ու պետությունը և իրավունքն առանց ազատության անհնարին են:

Ազատական - իրավաբանական հայեցակարգը ելնում է նրանից, որ իրավունքն ու պետությունը ծագում են ոչ որպես կազմակերպված բոնության մեքենա և ոչ էլ բոնության համար /որից ավելի լավ գլուխ է հանում բոնատիրությունը/, այլ ազատության ճանաչման, հաստատման և պաշտպանության համար, այն ձևով ու այն չափով, որով դա ընդհանրապես հնարավոր էր այն ժամանակներում: Դա հաստատվում է նաև պատմականորեն զարգացող պետական - իրավական ձևերում ազատության ամբողջ հետագա առաջընթացով՝ ընդհուպ մինչև մեր օրերի իրավական պետականությունը: Ինչպիսին իրավունքի և պետության էության հասկացողությունն է /և, հետևաբար՝ դրանց հասկացությունը/, այնպիսին էլ դրանց ծագման ու առաքելության համապատասխան հայեցակարգը, դրանց ծագման և զարգացման գործընթացի համապատասխան մեկնաբանությունն է:

Պետության առաջացման մասին վերոնշյալ տեսությունների բազմությունը ապացույցն է այն բանի, որ պետությունը որպես ինքնին բարդ և բազմաբնույթ սոցիալական երևույթ, առաջացել է մարդկության զարգացման որոշակի ժամանակաշրջանում, երբ դրա համար եղել են որոշակի օբյեկտիվ նախադրյալներ /տնտեսական, քաղաքական, սոցիալական, կրոնական և այլն/: Պետության առաջացման գործընթացը նույնպես բարդ ու հասարակ է եղել, որով և պայմանավորված է պետության առաջացման մասին տեսությունների

բազմազանությունը:

Իրավունքի առաջացման տեսություններն ու հայեցակարգերն անխզելիորեն կապված են պետության ծագման ուսմունքի հետ, քանի որ իրավունքը նույնպես ձևավորվել է այն օբյեկտիվ սոցիալ - տնտեսական և քաղաքական գործոնների հետևանքով, որոնք բնորոշ էին նաև պետականության առաջացման համար: Իրավունքը կոչված է նաև ամրապնդելու ձևավորված պետական իշխանությունը:

1. Հաշտության տեսություն: Այս տեսությունը լայնորեն տարածված է Արևմուտքում: Դրա կողմնակիցներն են անգլիացի գիտնական Գ.Բերգմանը, շվեդ գիտնական Է.Աններսը և շատ ուրիշներ: Արևմտյան հետազոտողների բուռն հետաքրքրությունն այդ տեսության հանդեպ միանգամայն հասկանալի է, դրանք զարգացել են աստիճանական ճանապարհով, ընդ որում սոցիալական ինստիտուտներն այնտեղ ստեղծվել են «ներքևից», այսինքն՝ պահանջի ի հայտ գալու դեպքում մարդիկ սկսել են մտածել, թե ինչպես արժանի պատասխանեն օբյեկտիվ իրականությանը: Իրավունքի ստեղծումը նման պատասխաններից մեկն է:

Տեսության էությունը կայանում է հետևյալում. Իրավունքը սկսել է ծնունդ առնել ոչ թե տոհմի ներսում, այլ դրանց հարաբերությունների կարգավորման համար: Հաշտարար և դատական իշխանության պարտականությունները տոհմի ներսում կատարում էր դրա առավել հեղինակավոր անձը: Տոհմի յուրաքանչյուր առանձին անհատ դեռևս իրենից սուրյեկտ չէր ներկայացնում: Տոհմն ապահովում էր նրա անվտանգությունն ու պաշտպանությունը: Այսպիսով, տոհմի ուժը նրա յուրաքանչյուր անդամի ուժն էր և դրա համար էլ նրա անդամների շահերից չէր բխում իրեն տոհմին հակադրվելը:

2. Կարգավորող տեսությունը: Այն տարածված է ասիական երկրներում և Ռուսաստանում: Այդ երկրների գիտնականների հատուկ հակվածության պատճառը կարգավորիչ տեսության հանդեպ այն է, որ նրանք իրավունքի ծագման մասին հարցի իմաստավորման ժամանակ հիմնականում հենվում էին ասիական երկրների պայմանների վրա: Երկրագնդի այդ մասի բնակչիմայական և աշխարհագրական խիստ պայմաններն էլ որոշում էին պետության հատուկ դերը: Ի սկզբանե այդ դերը համեստ էր և բավարարվում էր կարգի ու կայունության ապահովմամբ, որոնք բավական երեբուն էին նման դժվարին պայմաններում:

Իրավունքը ծագում է ողջ երկրի համար միասնական կարգի սահմանման և պահպանման համար: Կարգը մարդու կենսագործունեության շատ ոլորտներ ընդգրկող

հասկացությունն է, որն ընդարձակվել և խիստ ընդլայնվել է արտադրող տնտեսության հասարակության անցման կապակցությամբ:

3. Աստվածաբանական տեսություն: Այս տեսության ակնառու ներկայացուցիչներից և դրա գլխավոր մշակողներից մեկը՝ կաթոլիկ եկեղեցու խոշորագույն ներկայացուցիչ թուվմա Արվինացին է /13 -րդ դ.:/

Այս տեսության էության կենտրոնական գաղափարն այն է, որ իրավունքը ստեղծված է Աստծո կողմից մարդկանց կյանքը կարգավորելու համար և, որ այն մարդուն պարզապես է մարգարեի կամ տիրակալի միջոցով: Մենք մնան պատկերացում ենք կազմում հնագույն իրավական որոշ համակարգերի իրավունքի բնույթի մասին, այնպիսին, ինչպիսին են բարբելոնյան, հին հրեական և Մանուի օրենքները, ինչպես իսլամական իրավունքում: Այսպես, օրենքներում ամրագրվում է, որ բարբելոնյան թագավոր Համմուրային ողջ երկրում հաստատել էր ճշմարտություն և արդարություն, երբ Մարդուխ աստվածը ներշնչեց նրան արդարությունն ու արժանապատիվ կառավարումը պարզելու մարդկանց:

Թ. Արվինացին այդ գաղափարը հասցրեց մինչև գիտություն, համաձայն որի աշխարհը հիմնված է ձևերի աստիճանակարգի վրա /աստվածային, հոգեկան և նյութական/: Աստվածը աստիճանակարգի գլխավորն է: Հոգեկան աշխարհը գլխավորում է պապը՝ որպես Աստծո փոխանորդ երկրի վրա: Նման աստիճանակարգային սկզբունքով է կազմակերպված նաև հասարակությունը, եպատակները ենթարկվում են թագավորներին և աշխարհիկ իշխանություններին, ճորտերը՝ տերերին:

Համապատասխան ենթակայություն կա նաև օրենքների համակարգում: Թ. Արվինացին դրանք բաժանում էր չորս տեսակի.

- հավերժական օրենք. դա աշխարհը կառավարող աստվածային բանականությունն է.
- բնական օրենք. դա հավերժական օրենքի արտացոլումն է մարդկային բանականության: Դրան են վերաբերում համայնքային կյանքի օրենքները, ինքնապահպանման և ցեղի շարունակման բնագոյը.
- մարդկային օրենք. դա դրական և գործող ֆեոդալական իրավունքն է, որն արտահայտվում է պատիժներով ամրագրված բնական օրենքի պահանջներով: Այդ օրենքն անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ մեղսագործության հետևանքով չխեղաթուրեն, չայլասերեն բնական օրենքը.

աստվածային օրենք. դա Աստվածաշունչն է: Այս օրենքն անհրաժեշտ է երկու պատճառով:

Առաջին մարդկային բանականության անկատարելության պատճառով մարդիկ ինքնին չեն կարող ճշմարտության մասին միանշանակ եզրակացության հանգել և Աստվածաշունչը պետք է նրանց օգնի այս գործում:

4. Բնական իրավունքի տեսությունը: Բնական իրավունքի տեսությունը ծագել է դեռևս մեր թվարկությունից առաջ: Բնական իրավունքի վաղ տեսությունների հեղինակներն են՝ Լաո Զզին, Կոնֆուցիոսը, Արիստոտելը, Ցիցերոնը: Ավելի ուշ, 17 - 18 -րդ դարերում դրան անդրադարձան և մշակեցին Թ. Հոբսը, Ջ. Լոքը, Ժ. Ժ. Ռուսոն: Այս տեսությունը շարունակվել է մշակվել նաև ավելի ուշ՝ 20 -րդ դարում Ռ. Կոտանլերի, Լ. Ֆուլլերի, Ա. Կաուֆմանի և այլոց կողմից: Ահա թե ինչու են տարբերակում բնական իրավունքի վաղ տեսությունները, բնական իրավունքի տեսությունը, ուր ներմուծում է պայմանագրային տեսակետը / այլ կերպ՝ իրավունքի պայմանագրային տեսությունը /, և, վերջապես, վերածնված բնական իրավունքի տեսությունը:

Տեսության էությունը: Բնական իրավունքի վաղ տեսություններն ընդգրկում են հիմնադրույթներ, որոնք բնական իրավունքը դիտում են որպես առաքինության օրենք, որպես արդար բանականության իրավունք:

Իրավունքի պայմանագրային տեսության կողմնակիցները համարում էին, որ մարդիկ ի սկզբանե գտնվում էին բնական վիճակում, որ բոլորը հավասար ու ազատ էին, ունեին սեփականություն, ապրում էին խաղաղ ու անվտանգ պայմաններում: Նրանց կարծիքով, բնական իրավունքը մարդուն հատուկ է ծննդյան օրից: Սակայն ցանկացած օրենք երաշխիքների կարիք ունի: Մարդիկ հրաժարվեցին իրենց բնական իրավունքն ինքնուրույն ապահովելու իրավունքից: Նրանք պայմանավորվեցին ստեղծել պատիժներ նախատեսող օրենքներ հրատարակելու իրավունք ունեցող պետություն: Բնական իրավունքները փոխադրողովում են օրենքներով և ապահովվում իրավախախտների համար պատիժներով:

Բնական իրավունքի վաղ տեսությունները կարծես վերացնում են ընդհանրապես իրավունքի ծագման խնդիրը, շեշտը դնելով մարդու՝ որպես սոցիալական էակի համար իրավունքի որոշակի չափի առկայության վրա:

Բնական իրավունքի հայեցակարգերն ունեն սոցիալական հզոր լիցք, քանզի բարոյականության, արդարադատության, ուղղակի բանականության տեսակետից թույլ էին տալիս գնահատել և համապատասխանաբար քննադատել գործող իրավունքը, եթե այն դառնում էր հասարակական զարգացման արգելակ:

5. Իրավունքի պատմական տեսությունը: Այս տեսության հիմնադիրներ են համարվում գերմանացի գիտնականներ Հ.Հուգոն, Կ.Սավինին, Հ.Պոլխտան: Իրավունքի պատմական տեսությունը ծագել է 19 -րդ դ. առաջին կեսին, որպես բնական իրավունքի հակակշիռ, որից բխել են ժողովրդավարական և հեղափոխական գաղափարներ, միջին դարերից գոյություն ունեցող իրավաբանական կարգի արձատյան փոփոխման և «բանականության պահանջներին», «մարդու բնույթին» համապատասխանող օրենքների ընդունման կոչեր: Արևմտաեվրոպական պետությունների համեմատությամբ, Գերմանիան այնքան դանդաղ էր զարգանում և դեռ պատրաստ չէր ընդունել անձի ազատության, քաղաքացիների հավասարության գաղափարները: Այդ գաղափարների պահանջը նա չէր զգում, քանի Գերմանիայի տնտեսությունը դեռ չէր մտել ձեռնարկատիրական դարաշրջան: Հնարավոր է, որ հենց այդ պատճառով էլ իրավունքի պատմական դպրոցի գաղափարները Ռուսաստանում այդ շրջանում մեծ արձագանք գտան: Ըստ էության, այդ տեսության կողմնակից էր ռուս գիտնական Ն.Մ.Կորկուցովը:

Այս տեսության էությունը կայանում է նրանում, որ իրավունքի պատմական դպրոցի տեսաբանները «կրակի» տակ էին վերցրել օրենսդիր իշխանության նորմաստեղծ գործողությամբ ստեղծված դրական իրավունքի մասին տեսության բնական - իրավական դրույթը: Դրանք հաստատում էին, որ պետության մեջ գործող իրավունքը բոլորովին էլ օրենքների ժողովածու չէ:

6. Մարքսիստական տեսությունը, որի հիմնադիրներն են Կ.Մարքսն ու Ֆ.Էնգելսը, ներկայացրել են ոչ միայն պետության, այլև իրավունքի ծագման մասին իրենց տեսակետը:

Խնդր տեսության էությունը կայանում է նրանում, որ Մարքսն ու Էնգելսը նշել են, որ մարդկային հասարակության պատմությունը միշտ եղել է դասակարգային պայքարի պատմություն, որում ճնշողն ու ճնշվողը գտնվել են խիստ հակամարտության մեջ: Քաղաքական իշխանությունը հանդիսանում է մեկ դասակարգի կողմից ուժի կազմակերպված օգտագործում, մյուս դասակարգին ճնշելու և ենթարկելու համար: Իշխող դասակարգը սովորույթները վերափոխում է իր օգտին, դրանք հարմարեցնում իր կարիքներին, իսկ անհրաժեշտության դեպքում, ստեղծում օրենքներ իր նպատակներին հասնելու համար: Այսպիսով, իրավունքը հանդիսանում է օրենք դարձած իշխող դասակարգի կամք, նրա զենքը, որն օգտագործվում է հարստահարվող դասակարգին ճնշելու համար:

Բայց իրավունքն ինքը, ինչպես նաև հասարակական գիտակցության մյուս ձևերը /օրինակ՝ բարոյականությունը/ ամբողջությամբ պայմանավորված է հասարակական կյանքի

տնտեսական պայմաններով և պետք է համապատասխանի հասարակության տնտեսական կառուցվածքին: Մի խոսքով, հասարակական կենցաղը պայմանավորում է հասարակական գիտակցությունը և հակառակը: Հենց նյութական արժեքների արտադրության ձևն էլ սահմանում է մարդու կյանքի սոցիալական, քաղաքական, իրավական և հոգևոր գործընթացները:

Մարքսն ու Էնգելսը արդարացիորեն նկատել են, որ տնտեսությունը բոլորովին էլ միակ գործոնը չէ հասարակության զարգացման և մասնավորապես, իրավունքի ծագման գործընթացում:

Իր բոլոր քերականներով հանդերձ, չի կարելի մոռանալ մարքսիստական տեսության դրական կողմերն ու նվաճումները: Օրինակ իրավունքի, որպես հասարակական նյութական կյանքի պահանջներից ծնված երևույթի մոտեցումը, իրավունքի կապը դասակարգային կառուցվածքների, դասակարգային շահերի և մի շարք այլ դրույթների հետ, անկասկած, տեսաիրավական մտքի նվաճումներ են:

Այսպիսով, իրավունքի ծագումը պայմանավորված է եղել մարդու և հասարակության շահերի կարգավորման և ապահովման անհրաժեշտությամբ: Նրա հետագա զարգացումը ձեռք բերեց որակական նոր աստիճան՝ ընդհուպ մինչև միջազգային մարդասիրական իրավունքի ձևավորումը:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «Պետության և իրավունքի տիպականացման հիմնահարգերը» վերտարությամբ բազմակողմանի լուսարանվում են պետության և իրավունքի տիպականացման չափանիշների հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև վերլուծվում են պետության և իրավունքի տիպականացման հիմնական հայեցակարգերը:

Պետաիրավական երևույթների ճանաչումը պահանջում է պետական և իրավական համակարգերի մի վիճակից մյուսին անցումն արտահայտող հետազոտությունների ընթացքում դրոնել և գտնել մոտեցման առավել ընդհանուր սկզբունքներ:

Տիպաբանությունը կամ դասակարգումը ըստ պետությունների և նրանց իրավական համակարգերի տիպերի իրենից ներկայացնում է պետաիրավական մատերիայի ճանաչման օրյեկտիվորեն անհրաժեշտ և օրինաչափ մի գործընթաց, այն արտահայտում է պետության և իրավունքի զարգացման բնական պատմական գործընթացի տրամաբանությունը, պետության և իրավունքի որոշակի տեսակների /տիպերի/ պատմականորեն անխտասափելի փոխարինումը այլ տիպերով և հանդիսանում է պետության և իրավունքի զարգացման պատմական գործընթացի ճանաչման կարևորագույն ձևերից ու միջոցներից մեկը:

Պետության և իրավունքի տիպ կատեգորիան ինքնուրույն տեղ է զբաղեցնում պետության և իրավունքի տեսության մեջ, քանզի հնարավորություն է տալիս առավել լիարժեք ներկայացնել պետության և իրավունքի հարափոխությունը, նրանց ծագման ու փոփոխման էվոլյուցիայի առանձնահատկությունները, տեսնել հասարակության բնական - պատմական առաջընթացն ամբողջությամբ, ինչպես գոյի, այնպես էլ պետականորեն կազմակերպված հասարակության մեջ:

Պետությունների և իրավական համակարգերի տիպաբանությունը պետք է կատարվի խիստ որոշակի հիմքերի վրա, կյանքով, սոցիալ - քաղաքական փորձով հաստատված օրյեկտիվ չափանիշներին համապատասխան:

Համաձայն իրավաբանական, փիլիսոփայական և սոցիոլոգիական գրականության մեջ ձևավորված կարծիքի, պետական և իրավական համակարգերի տիպոլոգիան կամ դասակարգումն իրենից ներկայացնում է օրյեկտիվորեն անհրաժեշտ պետության և իրավունքի բնական - պատմական զարգացման ճանաչման օրինաչափ գործընթաց, որպես պետության և իրավունքի մեկ տեսակի մեկ այլ տեսակով փոփոխման պատմականորեն անխտասափելի գործընթացի արտացոլում: Տիպոլոգիաները հանդիսանում են պետության և իրավունքի զարգացման պատմական գործընթացի իմացության կարևոր ձևերից կամ միջոցների մեկը:

Ինչու՞մն է պետության և իրավական համակարգերի տիպաբանության գործընթացի սոցիալական իմաստն ու նշանակությունը: Ընդհանուր տեսական և քաղաքական գործնական պլանով տիպաբանության գործընթացի նշանակությունը կայանում է հետևյալում. առաջինը նրանումն է, որ պետության և իրավունքի տիպաբանության մասին մշակված գաղափարները տալիս են քննարկվող երևույթների և որակական մեկ աստիճանից հետևողականորեն, մեկ տիպից մյուսին անցման բնական - պատմական զարգացման գործընթացի ճիշտ ընթացման բանալին: Պետության և իրավունքի պատմական տիպերի փոփոխությունը հանդիսանում է պատմական առավել կարևոր և հանգուցային պահերից մեկը, առանց որոնց հնարավոր չէ ո՛չ դրանց էության զարգացման, ո՛չ սոցիալ - քաղաքական բովանդակության ու նշանակության, ո՛չ դրանց ձևի, գործունեության, ո՛չ հասարակության քաղաքական համակարգում դրանց տեղի ու դերի փոփոխության ճիշտ հասկացումը:

Երկրորդ՝ տիպաբանությունը հետազոտողին զինում է պետության և իրավունքի պատմական զարգացման գործընթացի ներքին բանականության և օրինաչափությունների ըմբռնմամբ, համղես է գալիս որպես պետության և իրավունքի գիտական կանխատեսման

հիմք:

Երրորդ՝ պետության և իրավական համակարգերի տիպաբանության գործընթացը բույլ է տալիս օրգանապես համադրել պետական - իրավական զարգացման, առանց բացառության բոլոր տիպերի պետություններին և իրավունքներին յուրահատուկ երևույթների ընդհանուր օրինաչափությունների հետազոտումը միայն որոշ պետություններին և իրավունքներին հատուկ յուրահատկությունների հետ, պետության և իրավունքի բնական - պատմական զարգացման ողջ գործընթացը դրա առանձին մասերի, կոնկրետ պատմական դեպքերի զարգացման գործընթացի հետ:

Չորրորդ՝ պետության և իրավական համակարգերի տիպավորման գործընթացում ստեղծվում են բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու հնարավորությունները, ողջ փաստական և գիտական նյութի լայն ընդհանրացման, համակարգման և վերլուծության համար, նյութ, որ վերաբերում է փաստորեն հասարակության, պետության և իրավունքի ծագման և զարգացման ողջ գործընթացի, դրանց՝ մեկ աստիճանից մյուսին հետևողականորեն անցման բոլոր կողմերին:

Եվ վերջապես հիմնվերող, պետության և իրավական համակարգերի տիպավորման գործընթացն օրյեկտիվ հիմք է ստեղծում պետության և իրավունքի բնական - պատմական զարգացման գործընթացի խոր շերտերի գիտականորեն ներբախանցման համար, քույլ է տալիս հատուկ տարբերակումներ դնել գիտական և կեղծ գիտական պետական - իրավական տեսությունների միջև, հնարավորություն է տալիս տարբեր երկրներում իրականացնել պետական - իրավական շինարարություն խիստ գիտական կյանքով, հաստատված փորձի հիման վրա:

Պետության և իրավունքի տիպականացման վերաբերյալ գոյություն ունեն տարբեր ու բազմազան տեսակետներ /ուսմունքներ, հայեցակարգեր/, որոնք պայմանավորված են ինչպես այդ սոցիալական երևույթների բարդությամբ, այնպես էլ այն եզակետային չափանիշների ընտրությունից:

Մեր կարծիքով լուծելով տիպաբանության հարցերը, գտնում ենք, որ պետության և իրավական համակարգերի տիպաբանության չափանիշները պետք է ունենան օրյեկտիվ բնույթ, համակողմանի ու համարժեք արտացոլեն հետազոտվող պետաիրավական երևույթը, իրենց մեջ ընդգրկեն զարգացման որոշակի փուլում գտնվող պետության և իրավունքի համար առավել կարևոր և տիպական նշաններ ու գծեր, առավելագույնս հաշվի առնեն և արտացոլեն տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ պայմաններ, որոնցում գործում են

պետությունն ու իրավունքը:

Հետազոտության արդյունքներից ելնելով կարելի է համզել հետևյալ եզրահանգումների և հետևությունների.

1. Պետության և իրավունքի առաջացման պրոցեսի գիտական հետազոտությունն ունի ոչ միայն ճանաչողական, իմացարանական նշանակություն, այլև քաղաքական - գործնական հնչելություն: Այն հնարավորություն է տալիս առավել խորությամբ ճանաչել և արժեքավորել պետությունն ու իրավունքը, դրանց բնութագրական առանձնահատկությունները:

2. Նախնադարյան հասարակության բնականոն գործունեությունը ապահովում էին սոցիալական կարգավորիչները՝ մոզույունը, պաշտամունքային արարողությունները՝ ծեսերը, տարուները, ավանդույթները, սովորույթները և սովորույթների իրավունքը:

Նախնադարյան հասարակության սոցիալական կարգավորիչները կատարում էին երկու գործառույթ:

Սոցիալական նորմերի առաջին գործառույթը այն էր, որ նրանք քույլ էին տալիս նախնադարյան մարդկանց իրենց հոգեկան էներգիան ազատել շրջակա աշխարհի հանդեպ վախից, տագնապից և ուղղել այն արտադրական գործունեությանը:

Սոցիալական կարգավորման երկրորդ գործառույթը հասարակության մեջ կայուն հարաբերությունների հաստատումն է, քանի որ հենց այդպիսի հարաբերություններն են բացառում պատահական, զուտ սուբյեկտիվ հանգամանքներն ու շարժառիթները, որոնք կարող էին արտահայտվել ազգակիցներից կամ ցեղակիցներից յուրաքանչյուրի կողմից: Ցեղակիցների այդպիսի վարքի պատճառը գոյության պայքարն է, որը հանդիսանում է հասարակական առաջընթացի հզոր կատալիզատոր:

Սոցիալական նորմերի պահանջարկը առաջացել է մարդկային հասարակության զարգացման ամենավաղ փուլերում և կապված է մարդկային վարքը կարգավորելու անհրաժեշտության հետ, ինչը հնարավոր է դարձնում նրանց նպատակահարմար փոխգործակցությունը այնպիսի խնդիրների լուծման համար, որոնք մեկ առանձին մարդու ուժերից վեր են:

3. Նախնադարյան համայնական հասարակարգի երկարատև, բայց անշեղ զարգացման գործընթացում աստիճանաբար ստեղծվում էին նախադրյալներ նրա որակական վերափոխումների համար: Աշխատանքի գործիքների կատարելագործմանը համապատասխան մարդիկ ձեռք էին բերում նոր արտադրական հմտություններ,

բարձրանում էր աշխատանքի արտադրողականությունը, կուլտուրան, քաղաքականությունը, հասարակության անդամների շահերը դառնում էին առավել բազմաբնույթ ու հակասական:

Արտադրության նախնադարյան եղանակից որակապես նորին անցնելու գործում կարևոր դեր է խաղացել աշխատանքի հասարակական բաժանումը, որը փոխարինեց տղամարդու և կնոջ միջև աշխատանքային ֆունկցիաների բնական բաժանմանը:

Տնտեսական այդպիսի վերափոխումների պայմաններում իշխանության տոհմացեղային կազմակերպումը անզոր գտնվեց: Այն հարմարեցված չէր այնպիսի հասարակության գործեր կատարելու, որում անհատների շահերը անհամատեղելի էին: Այդ իսկ պատճառով պահանջվում էր իշխանագոր այլ մարմին, որը կարողանար ապահովել հասարակության որոշ անդամների շահերի առավելությունը՝ ի հաշիվ մյուսների: Այդպիսի պայմաններում հասարակական հարաբերությունների կոորդինացումը կորցնում էր իր հավասարակշռությունը: Հասարակությունը, մարդկանց տնտեսապես անհավասար խմբերի /դասակարգերի/ տրոհվելու հետևանքով, օբյեկտիվորեն ծնում է իշխանության այնպիսի կազմակերպում, որը պետք է մի կողմից պահպաներ ունևորների շահերը, իսկ մյուս կողմից զսպեր հակասությունը նրանց և հասարակության տնտեսապես կախյալ վիճակում գտնվող մասի միջև: Հասարակությունից առանձնացված այդպիսի կազմակերպություն եղավ պետությունը:

Պետությունը հատուկ բաղադրական կազմակերպություն է, որն ի տարբերություն նախնադարյան համայնական հասարակարգի իշխանության կազմակերպության, բաղկացած է մշտապես հասարակական գործերի կատարմամբ զբաղվող հատուկ մարմիններից: Պետականորեն կազմակերպված հասարակության առաջին ձևը ստրկատիրական հասարակությունն էր, որը հիմնականում բաժանվում էր ստրուկների և ստրկատերերի: Ստրկատիրական պետությունը ապահովում, զսպում և կոորդինացնում էր նրանց շահերի անհաշտելիությունը: Ստրկատիրական պետության կառուցվածքը, գործունեության բովանդակությունը համապատասխանում էին այդ հասարակության զարգացման մակարդակին:

4. Պետականության ձևավորումից հետո սոցիալական նորմերի դերն ու նշանակությունը հասարակական կյանքում ավելի է բարձրանում: Սոցիալական նորմերի համակարգում աստիճանաբար ձևավորվում է օրենսդրական իրավունքը, որն օժտված լինելով պետական իշխանական հեղինակությամբ, ձեռք է բերում հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգում ամենահամապարփակ սոցիալական

նորմի կարգավիճակ: Մակայն, դրան իրավունքը անմիջապես չի հասնում, այն անցնում է զարգացման չափազանց երկարատև ժամանակաշրջան, որը, պայմանականորեն, կարելի է անվանել չձևավորված իրավունք և օրենսդրական կամ զարգացած իրավունք: Վերջիններս նույնպես հարաբերական բնույթ են կրում, քանզի իրավունքի, ինչպես նաև մյուս պետաիրավական երևույթների զարգացումը անընդհատ և հարատև է:

5. Իրավունքի ձևավորումը կամ ծագումնաբանությունը անցել է մի շարք փուլեր /շրջաններ/: Իրավունքի ձևավորման և զարգացման առաջին փուլը կարելի է պայմանականորեն անվանել չձևավորված կամ պարզունակ իրավունք:

Իրավունքի զարգացման այդ փուլի վերաբերյալ քույրատերելի են նաև այնպիսի անվանումներ, ինչպիսիք են՝ ցեղային, ժողովրդական, սովորական, բարբարոսական, պարզունակ իրավունք:

Հնարավոր է, որ հենց դրա համար էլ նորմերն ամենից հաճախ ընդունում են սովորույթների, այսինքն՝ քաղում սերունդների կյանքի ընթացքում պատմականորեն ձևավորված և բազմակի անգամներ կրկնվելու արդյունքում համընդհանուր դարձած կանոնների բնույթ՝ «սովորույթային իրավունք»: Մակայն այդ սովորույթները պահպանվում էին ոչ թե ցեղակիցների, ինչպես առաջ, այլ դրանց կազմից ընտրված կառավարման մարմինների կողմից /առաջնորդների, ջոկատայինների՝ դրուժինիկների, քրմերի և այլն/: Հենց այդ պատճառով էլ դրանք սովորույթներից դառնում են իրավական և այսպիսով ձևավորվում է սովորույթային իրավունքը:

Իրավունքի զարգացման երկրորդ փուլը կարելի է անվանել պետական կամ օրենսդրական իրավունք: Դրա ծագումը հանդիսացավ տնտեսության աստիճանական զարգացման և տնտեսական գործընթացին ուղեկցող հասարակական աշխատանքի մասնագիտացման արդյունք, իսկ այստեղից հասարակության անխուսափելի տարանջատում:

Եթե հակիրճ բնութագրենք զարգացած /օրենսդրական/ իրավունքը, ապա կարելի է նշել դրա երկու գլխավոր յուրահատկությունները. 1. առավելապես պետական մարմինների իրավաստեղծ գործունեություն. 2. իրավական նորմերի պաշտպանություն պետական, հատկապես՝ իրավապահ մարմինների կողմից:

Հավանաբար, իրավունքի զարգացման այս գործընթացը չի ավարտվի: Եթե փորձենք կանխագուշակել իրավունքի զարգացման հետագա գործընթացը, ապա կարելի է ենթադրել, որ ապագայում հնարավոր է, որ իրավունքի ազգային համակարգերը միաձուլվեն իրավունքի

համաշխարհային մեկ համակարգում:

6. Ոչ միայն պետության և իրավունքի առաջացման պատճառների, այլև այդ կատեգորիաների գիտական տիպաբանության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր հայեցակարգեր: Մեր կարծիքով, ինչպես պետության և իրավունքի առաջացման պրոցեսը պարունակում է որոշակի ընդհանուր օրինաչափություններ /բազմաթիվ տարբերություններով հանդերձ/, այնպես էլ պետության և իրավունքի տիպաբանությունը պետք է հենվի որոշակի օրինաչափությունների կամ չափանիշների վրա: Ատենախոսության հեղինակը որպես այդպիսի հիմնական չափանիշներ համարում է՝ քաղաքական, տնտեսական, էթնիկական, կրոնական, բարոյական և մշակութային գործոնները:

Այդ գործոնների համակցությունը և նրանցից յուրաքանչյուրը առանձին վերցրած, տարբեր քաղաքակրթություններում պետության և իրավունքի առաջացման պրոցեսի վրա ազդել ու շարունակում են ազդել տարբեր ձևերով և մեթոդներով, որի հետևանքով աշխարհում չեն եղել, չկան և չեն լինի նույնական, համարժեք պետություններ ու իրավական համակարգեր:

Մակայն, մարդկային միտքը միշտ հակված է, և դա քնական է, քազմազան և բազմաթիվ երևույթների մեջ գտնել դրանց ընդհանրական, բնութագրիչ կողմերը և դրանք դասակարգել: Հետազոտության արդյունքներից ելնելով և հենվելով մինչ այժմ եղած պետության և իրավունքի տիպականացման հիմնական հայեցակարգերի վրա, ատենախոսության հեղինակը առաջարկում է հետևյալ տիպականացումը երկու մեծ խմբերի.

ա. չզարգացած պետականության ձևեր, որոնք ներառում են հին և միջին դարերի ազրաբային - դասային պետությունները, նոր ժամանակաշրջանի կրոնական, գաղափարախոսական /ֆալստական, կոմունիստական/, կլանային պետությունները.

բ. զարգացած պետականություններ, որոնք ենթադրվում են՝ իրավական, սոցիալական պետություններ, որտեղ երաշխավորված են մարդու բնական և անօտարելի իրավունքներն ու ազատությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Պետությունը և իրավունքը որպես սոցիալական հիմնարար արժեքներ. - «Օրինականություն» 2002թ., քիվ 17, էջ 37-44:
2. Պետության առաջացման հիմնական հայեցակարգերը.-«Օրինականություն», 2002թ., քիվ 19, էջ 34-40:

3. Իրավունքի առաջացման հիմնական հայեցակարգերը.-«Իրավագիտության հարցեր», 2002թ.,թիվ 3, էջ 89-94
4. Պետության և իրավունքի տիպականացման հիմնական հայեցակարգերի քննական վերլուծություն.- «Օրինականություն», 2002թ. թիվ 20, էջ 46-51
5. Պետության և իրավունքի գիտական տիպականացման չափանիշները.- «Իրավագիտության հարցերը», 2002թ., թիվ 4, էջ 135-139

Сардарян Карен Гекторович

Теоретические проблемы происхождения и типологии
государства и права

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01. – “Теория и история государства и права, история правовых учений”.

Защита состоится “25” ноября 2005г. в 11⁰⁰ час на заседании специализированного совета 041 ВАК-а при Академии государственного управления РА (по адресу: 375028, Ереван-28, Киевян 8).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена актуальным проблемам происхождения и типологии государства и права. Следует особо отметить, что изучение проблемы происхождения и типологии государства и права имеет не только познавательный, академический, но и политико-практический характер. Оно позволяет глубже понять социальную природу государства и права, их особенности и черты, дает возможность проанализировать причины и условия их возникновения и развития, позволяет четче определить свойственные им функции – основные направления их деятельности, точнее установить их место и роль в жизни общества и в политической системе.

В результате анализа исследуемых проблем, автором сформулирован ряд выводов и рекомендаций как теоретического, так и практического характера, которые разработаны на основании материалов зарубежной и национальной юриспруденции.



0 2 03 2013